հէքեաթներով կղբաղեցնէր հասարակութիւնը և ժողովրդեան մէջ յարգանք ունէր՝ մի երեկոյ նստած էր այս սենեկի ձախ կողմի գլուխն։

Հաւաքուած ժողովուրդն խառնիճաղանճ աղմուկ բարձրացոյց, քանին այս աղմուկից ձանձրացած՝ ծերունի Յովհաննէսից խնդրեցին.

—Աջմու տարուայ Մօլլա սըլէյմանայ զսան (անցք) էրայ.

Յովհաննէս ճակատն և ծոծրակը շփեց, գալիյօնը մի կուշտ քաշեց, ամպի նման ծուխն արձակեց բերնէն ու սկսաւ։

—Էն տարին օր ալամ եկեր ա՝ իդա մըր էրկրներ առ ու գերի էրի՝ գացեր ա, էն վախտ իդա տեղեր՝ մկա ինչ օր քրդանոց ին՝ հըմէն հայ ա էղած։ Աջմու օրտուն (զօշուն) Աջամտանից օր կը յելնի, կը ձեռքուի ջարդելու, թալնելու՝ կիգայ դըխ Ալաշկերտ. հար յուստ կընցնի, ուր յետևից խարաբա կը թողայ, Խօսք չը յերկնցունք, խօլասայ կիգայ, կը հասնի հուտայ Դաւօյի գեղ ու Գարսան, էդ տեղեր լէ կը վառայ ու կաւիրայ. գիշեր օրտուն կը մնայ Դաւօյի գեղի մօտ, օր սարբախտան բասխուն տան (յարձակին) վրը մըր գեղին։ Մըր գեղ էն վախտ շատ մեծ կեղնի՝ եօթ հարիւր տնից լէ յեվալ։ Իդա մըր Ասուարածին եղեկեցին լէ մեծ կամարակապ վանք կեղնի։ Սապախտան շուտ Աջմու օրտուից մէկ քեանի մի հարիր ձիաւոր յառէջ կիգան, օր շուտ մտնեն մըջ մըր գեղին՝ չուրի օրտուն յէտեվանց հասնի։ Էդ ձիաւորներ կիգան օր մտնին մըջ մըր գեղի սինօրին (սահման). մէկ լէ կը տեսնին օր, հանդայ գեղի մէջ երեք հատ բայրաղ (դրօշակ) կերևայ, էգօնք կը շաշմին, կը մնան։ Հէյ վավիլէր, էտ ի՞նչ բան ա կըսին, յէրէկ, յուդա ոչ բայրաղ կէր, ոչ բան, իդա ի՞նչ ա։ Ցիրարու կըսին կեղնի օր մենք օզոր (սխալ) ինք էկէ, մկա մըր օրտուի բայրաղներն ա կը յերևան, էն մէկ լէ կը վերու կը սայ՝ աղբէր, ահան իդա Դաւօյի գեղ օր մըր օրտուն ա մէջ, իդա լէ Խաստուր, օր յիրկուն կերևէր։